ՀՀ, Երևան 0010, Ամիրյան 4/6 Հեռ՝. (374 60) 60 70 80, 60 71 81, Հեռ.(Ֆաքս)՝ (374 60) 60 72 82, info@tmaudit.am, www. tmaudit.am

«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին կից «Թաթուլ Մովսիսյանի երիտասարդների աջակցման կենտրոնը»

հայտարարում է **գործնական հաշվապահության ուսուցման** եռամսյա դասընթացի մեկնարկ:

ՎԵՐՆԱԳԻՐ: Գործնական հաշվապահության հիմնարար դասընթաց

ՄԿԻԶԲ: 15 սեպտեմբերի, 2014թ.

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ: 3 ամիս, շաբաթական 2 օր՝ 2 ժամ տևողությամբ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳԻՐ:
Դասընթացի նպատակն է՝ տալ մասնակիցներին պրակտիկ գիտելիքներ և հմտություններ՝ ինքնուրույն իրականացնելու հաշվապահական հաշվառման բոլոր գործառույթները:
Դասընթացը անցկացվելու է Երևանի կենտրոնում (Ամիրյան 4/6)՝ հայերեն լեզվով:
Դասընթացավարները բարձր որակավորում ունեցող մասնագետներ են (ԹՄ Աուդիտի փորձառու աուդիտորներ և հաշվապահներ):
Մասնակիցներին կտրամադրվի դասընթացի համար անհրաժեշտ բոլոր նյութերը:
Շրջանավարտներին կհանձնվեն ավարտական վկայականներ:
Ամենատաղանդավորները կունենան բացառիկ հնարավորություն՝ աշխատանքի անցնել “ԹՄ Աուդիտ” ՓԲԸ-ում:

Ծրագիրը ներառում է՝

- Հաշվապահական հաշվառումը, դրա ընդհանուր նկարագիրը
- Ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվությունների տարրերը
- Հաշվապահական հաշվառման սկզբունքները, սինթետիկ և անալիտիկ հաշվառում
- Հաշվապահական հաշիվները և հաշվային պլանը
- Կրկնակի գրանցման եղանակը և գործառնությունների գրանցումը
- Ակտիվներ և պարտավորություններ
- Սեփական կապիտալ
- Եկամուտներ և ծախսեր
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ) ընդհանուր նկարագիրը
- Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ
- Հաշվապահական ծրագրի ներկայացում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ: Ամսական 30 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ: Բոլոր հետաքրքրված անձինք կարող են լրացնել և ուղարկել կից դիմումի ձևը info@tmaudit.am էլ. հասցեին, կամ թղթային տարբերակը լրացնել ԹՄ Աուդիտ ՓԲԸ-ի գրասենյակում (Ամիրյան 4/6, տարածք 149), երկուշաբթի-ուրբաթ օրերին 9:30-ից մինչև 18:00:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ: 10 սեպտեմբերի, 2014թ.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ: «Թաթուլ Մովսիսյանի երիտասարդների աջակցման կենտրոնը» հիմնադրվել է «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին կից, որպեսզի աջակցի տաղանդավոր երիտասարդներին՝ կառուցելու իրենց մասնագիտական ուղին՝ որպես հաշվապահ: «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն Հայաստանի առաջատար աուդիտորական և խորհրդատվական ընկերություններից է: